ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԼՄ - 1

ք. Վանաձոր «02» «02» 2022թ.

Լոռու մարզպետարանը, ի դեմս գլխավոր քարտուղար Կ. Աշրաֆյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Հատկացնող, մի կողմից, և <<**Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան**>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն **Ա.Ավդալյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Ստացող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Հատկացնողը հատկացնում է, իսկ Ստացողը ստանում է ՀՀ կառավարության 23.12.2021թ .թիվ 2121-Ն որոշմամբ նախատեսված թանգարանային և ցուցահանդեսների կազմակերպման ծառայությունների մատուցման նպատակով հատկացվող ընթացիկ դրամաշնորհը (այսուհետ դրամաշնորհ)՝ 22486000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով, (ներառյալ ԱԱՀ):

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գլխավոր կարգադրիչը իրավունք ունի՝

2.1.1 Իրականացնել վերահսկողություն դրամաշնորհի նպատակային օգտագործման նկատմամբ:

2.1.2 Դրամաշնորհի կամ դրա մի մասի ոչ նպատակային օգտագործման դեպքում կազմակերպության միջոցներից հետգանձել ոչ նպատակային օգտագործված գումարը և դադարեցնել դրամաշնորհի հետագա հատկացումը:

2.2 Գլխավոր կարգադրիչը պարտավոր է՝

2.2.1 Ստացողին հատկացնել դրամաշնորհի գումարները՝ ծառայությունը մատուցողի հետ կնքված պայմանագրի գնին համապատասխան:

2.3 Ստացողն իրավունք ունի՝

2.3.1 Ստանալ Հատկացնողի կողմից հատկացվող դրամաշնորհը:

2.4 Ստացողը պարտավոր է՝

2.4.1 Դրամաշնորհի գումարները օգտագործել նպատակային:

2.4.2 ԱԱՀ-ն՝ 3748416 ՀՀ դրամ տարեվերջին հետ վերադարձնել ՀՀ կենտրոնական գանձապետարան:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Ստացողը պատասխանատվություն է կրում դրամաշնորհի նպատակային օգտագործման համար:

3.2 Հատկացնողը պատասխանատվություն է կրում դրամաշնորհի հատկացման համար:

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

4.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն,

որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2022թ. դեկտեմբերի 28-ը:

5.2 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

5.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կառավարության որոշումների հիման վրա, կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

5.4 Սույն պայմանագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՏԿԱՑՈՂ	ՍՏԱՑՈՂ
Լոռու մարզպետարան	<< Լոռի –Փամբակի երկրագիտական
ք. Վանաձոր, Հայքի հրապարակ	թանգարան_>>___ՊՈԱԿ_____
ՀՀ _900231611022_____	ՀՀ ___900238000708_____
ՀՎՀՀ 06930769	ՀՎՀՀ ____06914498_____
_____Կ.Աշրաֆյան	_____ ___Ա. Ավդալյան____
	ստորագրություն անուն,ազգանուն
Կ. Տ.	Կ.Տ